ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 7

(արտահերթ նիստը գումարվել է 2025 թ.-ի հունիսի 10-ին)

Նիստին մասնակցում էին կառավարման խորհրդի 7 անդամներ, բացակա՝ 2 անդամ: Նիստին մասնակցում է «Երևանի Ա. Մարգարյանի անվան թիվ 29 ավագ դպրոց » ՊՈԱԿ-ի գլխավոր հաշվապահ Ռուզաննա Ամիրյանը, «Երևանի թիվ 2 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի հաշվապահ Հռիփսիմե Բաբուրյանը:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1.« Երևանի Ա. Մարգարյանի անվան թիվ 29 ավագ դպրոց » ՊՈԱԿ-Ի 2025թ. եկամուտների և ծախսերի նախահաշվի մեջ փոփոխության կատարում /զեկուցող՝« Երևանի Ա. Մարգարյանի անվան թիվ 29 ավագ դպրոց » ՊՈԱԿ-ի գլխավոր հաշվապահ Ռուզաննա Ամիրյան /:

2.«Երևանի թիվ 2 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի 2025թ. եկամուտների և ծախսերի նախահաշվի մեջ փոփոխության կատարում / զեկուցող՝ «Երևանի թիվ 2 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի հաշվապահ Հռիփսիմե Բաբուրյան /:

Լսեցին-1. Ռ. Ամիրյանին՝ 2024 թվականի IV եռամսյակում ՀՀ ԿԳՄՍ նախարարությանը ետ է վերադարձվել 23000.0 հազ. դրամ գումար: Համաձայն համար 546Ն/5 29.05.2025 թվականի պայմանագրի՝ թիվ 29 ավագ դպրոց ՊՈԱԿ-ին աշակերտական գույքի, համակարգչային տեխնիկայի և դահլիճի ձայնային համակարգի ձեռք բերման նպատակով, ըստ 2024 թվականին ԿԳՄՄՆ-ին կազմված և ներկայացված նախահաշվի, հատկացվել է՝

• Աշակերտական գույքի համար	— 750,0 հազ. դրամ
• Համակարգչային տեխնիկայի համար	— 10529,0 հազ. դրամ
• Դահլիճի ձայնային համակարգի համար	— 960,0 հազ. դրամ
Ընդամենը	— 12239,0 հազ. դրամ

Նախահաշվում կատարվել է փոփոխություն՝

• Հիմնական միջոցների համար (հոդված 5121)	— 10529,0 հազ. դրամ
• Մասնակի վերանորոգում (հոդված 4269)	— 1274,0 հազ. դրամ

ԿԳՄՄՆ-ին ներկայացվելու է առանձին հաշվետվություն :

Լսեցին-2. Ռ. Ամիրյանին՝ Դահլիճի հատակի մասնակի վերանորոգման համար ԿԳՄՄՆ-ին 2024 թվականին ներկայացվել է նախահաշիվ, սակայն այդ գումարը չի տրամադրվել: Այդ գործընթացը խիստ անհրաժեշտության պատճառով իրականացվելու է դպրոցի ֆինանսական միջոցներից:
Հաշվի առնելով 2024 թվականից ունեցած տնտեսումը աշխատավարձի հոդվածից (4111)՝ 1565,0 հազ. դրամ տրամադրվում է մասնակի վերանորոգման հոդվածին (4251)՝ 1565,0 հազ. դրամ:

Լսեցին-3. «Երևանի թիվ 2 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի հաշվապահ Հռիփսիմե Բաբուրյանը հայտնեց , որ «Երևանի թիվ 2 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի 10-րդ դասարանի աշակերտ Էլեն Ենգոյանը 2024-2025 ուսումնական տարվա դպրոցականների հայ գրականության առարկայական օլիմպիադայի հանրապետական փուլում արժանացել են երկրորդ կարգի դիպլոմի և ստանալու են ԿԳՄՍ նախարարության կողմից սահմանված կրթաթոշակ՝ 90000 / իննսուն հազար / ՀՀ դրամի չափով՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2024 թվականի դեկտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետության 2025 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 2060-Ն որոշումը և ՀՀ ԿԳՄՍ նախարարի2023 թվականի մայիսի 12-ի թիվ 52-Ն հրամանով հաստատված հանրակրթական ուսուցում իրականացնող ուսումնական հաստատությունների սովորողներին անվանական կրթաթոշակի տրամադրման կարգի պահանջներն ու «2024-2025 ուսումնական տարվա Հայաստանի Հանրապետության դպրոցականների առարկայական օլիմպիադաների հանրապետական փուլերի դիպլոմակիրներին անվանական կրթաթոշակ տրամադրելու մասին» 2025 թվականի ապրիլի 4-ի 817-Ա/2 հրամանը:

Հաշվապահ Հռիփսիմե Բաբուրյանը նշեց նաև , որ հաշվետու ժամանակաշրջանի դպրոցի հաշվի ազատ միջոցները 60%- ի չափով վերադարձվում են պետբյուջե , որից հետո Կառավարությունը այդ միջոցները նորից վերադարձնում է դպրոցի բյուջե, կնքվում է պայմանագիր հիմնական միջոցներ ձեռք բերելու համար՝ նախապես ունենալով ԿԳՄՍ նախարարի թույլտվությունը: Վերադարձված միջոցների հիման վրա նախատեսվել է անվտանգության համակարգի ձեռքբերում՝ 1545000 ՀՀ դրամ / մեկ միլիոն հինգ հարյուր քառասունհինգ հազար/, աշակերտական սեղան – աթոռների ձեռքբերում՝ 480000 ՀՀ դրամ / չորս հարյուր ութսուն հազար/ և գրատախտակ չորս հատ՝ 100000 ՀՀ դրամ / հարյուր հազար/ : Եվ Քանի որ վերադարձված գումարը չի բավականացնում, աշխատավարձից նվազեցվել է համապատասխան գումար:

«Հանրակրթության մասին » ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի պահանջների համաձայն, հիմք ընդունելով ներկայացվածը և քննարկումները՝ կառավարման խորհուրդը

Որոշեց.

1. Հավանություն տալ« Երևանի Ա. Մարգարյանի անվան թիվ 29 ավագ դպրոց » ՊՈԱԿ-ի 2025թ. եկամուտների և ծախսերի նախահաշվի փոփոխությանը և ներկայացնել ՀՀ ԿԳՄՄՆ՝ հաստատման:

2. Հավանություն տալ .«Երևանի թիվ 2 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի 2025թ. եկամուտների և ծախսերի նախահաշվի մեջ փոփոխությանը և ներկայացնել ՀՀ ԿԳՄՄՆ՝ հաստատման:

Կառավարման խորհրդի նախագահ՝ Ն. Այվազյան

Քարտուղար՝ Շ. Գալստյան